

ԲԱՅՆԵԿԻՆ

Ի Պոլսոյ
Տարեկ. 10 ֆր.
վեցամս. 5 "

Արտասահման
Տարեկ. 12 ֆր.
վեցամս. 6 "

Ամերիկա
2 Տոլ. 30 սենդ

ԿԱՆԻՍԻՆ



ՊԵՏԵՐԵՆԻ

Գրութիւնք եւ
չին տրուիր

Հասցէ
DIRAN
PAPAZIAN
YILDIZ TABIA
VARNA
BULGARIE

ՇԱԲԱԹԱՅԱՆԴԵՍ . ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԶԱՒԵՇՏԱԿԱՆ

Отговорникъ ГЕОРГИ ЯНТОВСКИЙ, Адвокатъ.

Ե ՏԱՐԻ

ՅՈՒՆԻՆ 16 ՇԱԲԱԹ 1901

ԹԻՒ 215

Ա Զ Դ

Մի անգամ ընդ միշտ կը յայտարարենք մեր բաժանորդներուն, բաժանորդ գրութիւն ուղղորդուն եւ գործակալներուն թէ

1. Դրամը մինչեւ որ չստանանք, բաժանորդ չենք գրեր ոչ մէկ տեղի համար.

2. Պայմանաժամին, օրը օրին պիտի դադարեցնենք, եթէ նոր բաժնեգիրը կանխաւ ընդունած չըլլանք, կամ եթէ մէկը ցուցում չըլլայ ուսկից գանձուի: Տպագրական բոլոր ծախքերը կանխիկ ըլլալուն, բաժնեգիրն ալ պէտք է կանխիկ ըլլայ:

3. Յուլիս մէկին պիտի հրատարակենք այն կարգ մը քարեխիղճ բաժանորդաց անունները, որոնք հակառակ մեր այնչափ խնդրանաց մինչեւ այն օրը չի փութան վճարել իրենց պարտքը:

Ա Զ Դ Ա Յ Ի Ք

Տեղւոյս Թաղ. Խորհուրդը համաձայնելով Ֆէնիքս ապահովագրական ընկերութեան քաղաքիս ներկայացուցիչ Տ. Յ. Մալիի հետ, հին պարտքը վճարելու եւ 45,000 ֆրանքի փոխարէն դարձեալ յիշեալ ընկերութեան ապահովագրեր է Ս. Եկեղեցին եւ Առաջնորդարանը (գալոց), յունիս 4է սկսեալ:

—Մի քանի անձնաւորութեանց կողմէ խմբագրութեանս ղրկուած նամակներ կը գանգատին տեղւոյս Ազգ. վարժարանաց մէջ կրօնագիտութեան դաս չտրուելուն դէմ եւ պատճառը կը

հարցնեն, թէ և կրօնագիտութեան անուանական դասատուն կը ստանայ եղեր իր ամսականը:

Նամակագիրք կը փախագին ու Տ. Տնօրէնը այս մասին պէտք եղած բացատրութիւնը տալ:

—Բարիչէն մեզ կը գրեն. «Հոս պատուոյ ատեան մը կազմուեցաւ, դատելու համար Պ. Զօպանեանը եւ Պ. Իսկէնտէրը իրենց մաքուր գործերուն համար: Երէկ և այս գիշեր (15 եւ 16 յունիս) Զօպանեան դատուեցաւ եւ վկաները լռուեցան. ուրբաթ օրը վճիռը պիտի արձակուի: Մէկ երկու օրէն ալ Պ. Իսկէնտէրի դատը պիտի տեսնուի: Մանրամասնութիւնք նամակաւ»:

ԱՐԿԱՍ

—Եօզղատցի Յովհաննէս էֆ. Ասլանեան 12 աշտանակներով պրօնդէ եւ բիւրեղեայ թանկագին ջահ (ալիդէ) մը նուիրել է Ազգ. Հիւանդանոցի Ս Փրկչի մատրան:

—Երուսաղէմի վանքին մէջ Լնթերցարան-Թանգարան մը բացուել է. տպագրուած գրքերը 3,000 հատորներու կը հասնին. որոնք մեծաւ մասամբ ժէ. դարու վերջերը եւ ժ՛՛՛ դարու միջոցին տպագրուած հազուագիւտ երկեր են եղեր:

—Ազգ. Հիւանդանոցի բժշկապետ տօքթ. Տաղաւարեան՝ նոյն հաստատութեան համար 300 յօգուածներէ բաղկացեալ կանոնագիր մը պատրաստել է որ մէկ քանի օրէն հրապարակ պիտի ելնէ եղեր:

—Սօֆիայէն կը գրեն. «Ս ուղրանիէն վաւերացուց օրինագիծ մը որ կը տրամադրէ թէ այսուհետեւ ատանց արտօնութեան զէնք կրողները պիտի դատուին զինուորական ատեանի առջև:

ՆԱԾԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Վառնա 9 Յունիս 1901

Խմբագիր,

Հաճեցէք հետեւեալը հիւրընկալել Ձեր անկողնակալ թերթին մէջ.

Շուրջ մէկ ու կէս տարի առաջ Պ. Ճանկիւեանի կողմէ Բաֆֆի մի քանի երկերը վիճակահանութեան դրուած էր որուն մասնակցած եմ ուրիշներուն պէս ես ալ. Արդ անկէջ ի վեր բաւական ժամանակ անցած ըլլալով և ինծի առաջարկող պարոնին ուղղած հարցիս պատասխանը սա եղաւ որ՝ «Պ. Ճանկիւեան խոստացած վիճակահանութիւնը չէ բարեհաճած մինչև այսօր գործադրել»։ Ի՞նչ ինչո՞ւ...

Մնամ յարգանք

Վիճակահանութեան մասնակցող տր. (*)

(*) Ուրիշ երկու մասնակցողներու կողմէ ալ սոյնի մաստ նմակ մը ստացած ենք վերջին պահուն. Ծ. Խ.

Թ Ղ Թ Ա Կ Ց Ո Ւ Թ Ի Ի Ն

Տէր Երեւոյնի շահասակութիւն

Պապատաղ (Ռուսմանիա) 7 յունիս

Քաղաքիս Հայ հասարակութիւնը որ կը բաղկանայ 35-40 տուներէ, մեծաւ մասամբ աղքատ է. ունի եկեղեցի և երկսեռ վարժարան մը. առաջնոյն մէջ 25-30 տարիներէ ի վեր տեղացի բաճանայ մը կը պաշտօնավորէր որ անցեալ տարի յունիս 20ին վախճանեցաւ ի Թուրքիա. իսկ երկսեռ վարժարանը 15 երկար տարիներ յանձնուած էր Վանեցի վարժապետի մը (այժմ Պուլկարիա) որուն տխուր յիշատակները այսօր նոր սերունդի վրայ աւաղ կը փայլին, զի մեծամասնութիւնը դեռ իւր մայրենի լեզուն չգիտէ:

Ազգային գործերու վիճակը շատ ցաւալի է. 9-10 տարիներ առաջ եկեղեցին իր բոլոր անօթներովը հոյ ճարակ եղած էր, վերաշինութեան համար մասնախումբ մը կազմուեցաւ որ հանգանակութեան գիմելով Ռուսմանահայոց և Պուլկարահայոց նիւթական աշակերութեամբ երկու տարի առաջ աւարտեցաւ շինութիւնը: Ու թէև յիշեալ մասնախումբի անդամք 3-4 տարի առաջ սահմ. օրինս թաղական խորհուրդ ընտրուած էին, բայց եկեղեցւոյ շինութիւնը չաւարտած՝ անհոգութեամբ վարժա-

րանի փակմանը պատճառ հանգիստացան, որով երեք տարիներէ ի վեր վարժարանը թռչուններու բոյն դարձած է ու հայ երգսեռ մանկտին Ռուսմանիա վարժարանը կը յաճախէ:

Եկեղեցւոյ հարստութիւնը կը հասնի 14,000 Փր. որուն մեծագոյն մասը կը բաղկանայ անշարժ կալուածներէ և գանձելի գրառներէ, որոնք տարեկան մօտաւորապէս 1000-1200 Փր. հասոյթ մը կը մատակարարեն. ասկէ զատ անցեալ տարի Թուրքիա քաղաքի մէջ հանգուցեալ Ղազար աղա Էսկիճեանը Ս. Եկեղեցւոյ տարեկան 3-400 Փր. հասոյթ բերող մի կրպակ կը տակեց, բայց տեղոյս Թաղականութիւնը վերայիշեալ կտակի օրինական թուղթերը չինել տալու դեռ անփոյթ կը գտնուի 50-60 Փր. ծախքի համար:

Անցեալ տարի տեղոյս քահանային վախճանելովը քահանայի մը պէտքը զգալի եղաւ. Թաղ. խորհուրդը լսելով որ Տ. Գէորգ. Հիւրմիւզեան անպաշտօն կը գտնուի ի քէօթէնձէ, հոս կը հրաւիրէ զայն. այս լուրը հանրածանօթ Տ. Երեւոյնի ականջը կը հասնի և Վառնայէն իսկոյն կը փութայ քաղաքս գալ և 30 Փր. ամսականաւ կը խոստանայ քահանայագործել. բայց երկու ամիս անցնելէ ետքը 30ին տեղ 50 կը պահանջէ Թաղականութենէ ու 40ով կը համաձայնին: Յիշեալին քննութեանը համար Ազգ. վարժարանը կը յատկացուի և օգոստոսէն կը սկսի պաշտօնավարել: ու տեսնելով եկեղեցւոյ անաւեր և անպաշտպան վիճակը, թէ երեցիփոխան չկայ, առիթէն օգտուելով այդ պաշտօնն ալ իր վրայ կառնէ ու կը սկսի այնուհետեւ մօմերը ինք առնել և շահը ցոյց չտալ: Վերջին ամսուն Թաղականութիւնը սթափելով հաշիւ կը պահանջէ, տէրտէրը հաշիւ չտալէ զատ՝ զատկի առթիւ մօմ առի ըսելով 15 Փր. գումար մըն ալ կառնէ Թաղականներէն:

Աւելի քստմնելին այն է թէ Ազգ. վարժարանի մէջ իր սենեակը գիշերանց անբարոյական Ռուսմանիա մը բերելու համարձակութիւնն ունեցած է, որուն ականաւորեա վկայ են եկեղեցւոյ շրջակայ հայ բնակիչներէ ոմանք և այս ամօթալի լուրը մինչև իսկ օտարաց մէջ կը տարածայնուի: Շատ անգամ գիշերուան մինչև ժամը 11 գիշերտան մէջ անցունելէ ետքը յաջորդ օրը կը պատարագէ: Եկեղեցւոյ ճերմակ խաւէ շապիկները իբր ճերմակեղէն կը գործածէ. հին շուրջառներէ մէկ քանին աւերելով իր սենեակին վարագոյր և մէկ քանին ալ ձիւն-Տէր շինած է, վարագոյրի մը կէսն ալ անկողինի ծածկոց ըրած է: (Բո՛ժ, — Սրտերնիդ ամուր բռնեցէք, տակաւին շատ բաներ պիտի ընէ քանի որ բաւական չին ուսած մարդոց մէջ կը գտնուի): Անցեալները երբ գիշերը կերթար շուկային մէջ աղգայինի մը պօռալով կըսէ թէ «Պան կիտեօրմ, էկէր սատկելլէյէն օլուրսա հաֆուսլարը, թէլէֆօնտա պիլուրուն կէլիւրում»։ Իր տուած բարոյներէն մէկ երկու նմոյշ. քառասնից մանկանց օրը բեմէն պոռաց, «Պու կուն քառսուն մանկունքուն կէպէրտուզու կուն տուր, աղքսընը. բէնտուլարը սուեա աթուրլար ալլախըն խաթիրի իչին պիլիմ

իշխեն:» Արիշ օր մ'ալ սա քարոզը տուաւ «Առաջին եկեղեցի եկողը ոսկի է, երկրորդը արծաթ, երրորդը փախըր, իսկ չորրորդը և վերջինը քօխրոխսանսա աշար» Համարածման օրը «Քրիստոս այսօր համարածում կուռնէ, ո՞ւր են մեր աղաները. մեր մէջ չի կայ Քրիստոս» և առանց ու ե է կապակցութեան ու խօսքերը կը կցէ. «Գանձեցէք գանձս յերկինս. թօթափեցէք զփառքս, (Բոժ. — Գունն երբ պիտի թօթափիս) աղնըսըզ ես. պէն խաճ տէֆա աղալարա սէօյլատըմ քը պիր ժողովք եաբուն. էկէր պէնի խթմէմէյրսէզ սէօյլէին, ամա կէնէ պէն սիզի պրախմանաճարմ. չո՞նքի նէ՞ իչուն տէրսէն պէն սիզի սէվմուշում (Բոժ. — Սօյալմուշ սօղանա չէվիրմէք իշխեն) աղալար տա էյի ատամլար տուլար խուզու կիպի տիր պուրանըն ատամը (Բոժ. — Իշխէ եաբաբօրլար, տէյիլ մի): Իսկ քարոզներուն վերջաբանը այսպէս է. «Հայր Աստուած ձեր հայրը օրհնեսցէ, Որդին Աստուած ձեց որդին օրհնեսցէ, Հոգին Աստուած ձեր հօգին օրհնեսցէ. զտունս զարմօք դաւաճօք օրհնեսցէ (Բոժ. — Եւ դիւզ ալ խեղճ ժողովուրդին վրայէն սաաթ մը առաջ հնարաւորի տրասցէ) օրհնեալ էք և օրհնեալ լինուք ամէն:

* * * *

Հրատարակելու համար հետեւեալները ղըրկուած են մեզի ալ.

«Իրաւունք» խմբագրութեան.

«Որովհետեւ չբարեհաճեցաք տպագրել Ձեր լրագրին մէջ մեզի տրուած բացատրութիւնը ի մասին Ձեր տպագրած խմբագրական ծանօթութեան (Իրաւունք թիւ 38) որ մտքերը կը գայթակղեցնէ մեր պատույ մասին, ուստի կը պընդենք և կը խնդրենք Պ. Խմբագիր որ ձեր յառաջիկայ թուոյն մէջ անպատճառ և անփոփոխ տպէք մեզի տրուած բացատրութիւնը ըստ տրւած բացատրութեան տպագրական օրինաց:

Ի գիմաց Թատերասէր Մասնախմբի

Մ. ԶԳՈՆ

Յ. Գ. Մէյմէկ օրինակ ալ Իրաւունքի և Շարժումի ղըրկուած է:

* *

Վառնա 13 յունիս 1901

Առ Յարգելի խմբագրութիւն «Իրաւունք»

լրագրոյ

Եւ որովհետեւ Ձեր լրագրոյ 41 թիւին մէջ մեզ ուղղուած հրապարակային յայտարարութիւնովդ տեղի կուտաք կարծելու թէ՛ պատասխանատուութենէ փախչելու կանխակալ տրամադրութիւններ ունիք, ներկայիս դարձեալ կը կրկնենք ու կը խնդրենք որ բարեհաճիք այլևս առանց ու ե է յայտարարման, ձեզ ղըրկուած բա-

ցատրութիւնը ի մասին լրագրոյդ 38 թիւին մէջ երեցած անդրեճիկին, հրատարակել անփոփոխ տպագրական օրինաց տրամադրութեան համաձայն և այսու բաւարարութիւն տալ մեր սոցալական պահանջին:

Մեր այս ներկայ գրութեան պատճէն պիտի խրկուի տեղական մամուլի թիւով թիւն ժողովրդեան թէ՛ ո՞րքան օրինակն է մեր պահանջի, իսկ հակառակ պարագային ձեռք առնուելիք միջոցներու արդարացման համար

Հաճեցէք ընդունիլ մեր պարտականութիւններ

Ի գիմաց Թատերասէր Մասնախմբին

Մ. ԶԳՈՆ

ԲԱՅ ՆԱՄԱԿ Կուսակաւարին

Հնչակ թերթի 14 տարի թիւ 4ին մէջ կարգացի ձեր մի լիար գրութիւնը իմ անձիս ու պատուոյս նկատմամբ. չեմ ուզեր պատասխանել կանխաւ, այլ կը հրաւիրեմ ձեզ որ բուն ձեր անունով հրապարակ ելլալով ներկայանալ ընկ. դատաստանի մը, բոլորովին չեղօք ու պատուաւոր անձերէ կազմուած: Երբ մի ամիս պայմանաժամէն չէք ներկայանար և փախուստ կուտաք, այն ատեն պիտի վերաբերուիմ այնպէս ինչ որ պատուս ու արժանիքս կը պահանջեն:

Յակոբ Մրապեան

(Տիվրեղի)

Պուրկազ 7 յունիս

Յունիսի մէջ ձիւն

Առատ ձիւն տեղացած է Արզասի, Զուրցերիոյ, Թիրուի, Պոհեմիոյ մէջ և Հունգարիոյ հիւսիսկողմը: Սթերիոյ մէջ ողողումներ տեղի ունեցեր են, Պէրլին՝ օգը սոսկալի է: Ընդհանուր ցուրտ կը տիրէ: Իտալիոյ մէջ ցուրտ է: Ապէնինեան լեռները ձիւնով ծածկուած են: Հռոմ՝ ջերմաշափը դեռօէն մինչև 8 աստիճան վար կը ցուցնէ:

ՓՈՔՐ ԹՂԹԱՏՈՐ

Կոչնակ, Ֆիլիպէ — Տիար Մ. Զ. Հինգչաթի օրը մեկնեցաւ Ալեքսանդրիա:

Տ. Կ. Ս. Պուրկազ. — Ձեր գրութիւնը յաջորդով:

Տ. Բ. Լովէլ (Ամերիկա) — Սպառած է:

ՎԱՐԺԱՊԵՏ ԵՒ ՎԱՐԺՈՒՅԻ

Աստուած իւր Անեցեի եւ քաղնացարուի եւ շնորհ զերկիրը Հայ վարժապետներուն համար արձակած ըլլալու է: Ժամանակ մը մեր մէջ քահանայութիւնն այսպէս էր. գործ չգտնողն եւ ուսմանը չունեցողը քահանայ կըլլար: Երիտասարդ մը մեղքօնոց վկայականը գրպանելէ ետք, միջազգային ներկայ, անցեալ ու ապառնի գրականութիւնները շուրթերու պէս խմած, փրկիւթփայլութիւնը կ'ըլլած, գրաբարը լափած և թրիկոնովեղբորին չափչփած՝ ինքնաշտաճ քայլերով դպրոցին սեմէն դուրս կ'ելլայ: Տակաւին «անարգ մամուլային» արհամարհոտ աչքով մը կը նայի, շուկայիները մարդու տեղ չի դնել, ու իրեն համար շինած է ապրելու սքանչելի խտէալ մը: Սակայն պաղ իրականութեան մէջ անգամ մը մտնելէ ետք, երբ անօթութիւնն և քրքողութիւնը միաձայն համաձայնութեամբ՝ անոր բանաստեղծական ըմբռնումներուն ու երեւակայութեան վրայ պաղ շուր մը կը թափեն, երբ գործ կը փնտռէ՝ չգտնար և կստիպուի մէկ տարի ամբողջ — 54 շաբաթ ու 12 ամիս — Շիրակ ծամբուն ամաթիօր երկրաշափն ըլլալ. այն ատեն կը հարկադրուի Ուսումնական Խորհուրդին ներկայանալ, և ամիս մը ետքը երկսեռ վարժարան մը կը մտնէ՝ երկուստասանեակ մը «ութիւն»ներ դասախօսելու համար. . . փոխարէն ամսական 150 դրուշի, ապագայ սերունդին կըրթութեան զէկը ձեռք կառնէ: Հարցուցէք մեր վարժարաններու բոլոր շրջանաւարտներուն.

— Պարոն, ինչով կըբաղիք:

Ազգային պարծաւաններու մէջ կը պաշտօնաւարեմ:

Կուզէ՞ք բոլոր ձեր դէմը ելլող Հայ վարժապետները նանչնալ, ահա՛ պզտիկ եւնքանքանէ մը.

Ճամբան գացած ատեն կը հանգիպիք 23-25 տարու երիտասարդի մը, լայն շալվարածեւ բանգալոնով մը, որուն ետեւ կողմի ծայրերն ամառ ձմեռ ցեխոտած են. սե բարտըսիւ մը կամ րէտէնկով մը՝ որ չմաշուելու վատով տարիէ մը ի վեր չէ խողանալու և որ թոքախտաւորը մը չափ տոգոյն է. տարուան չորս եղանակներուն մէջ անպատճառ թեւին տակ հովանոց մը, որուն կանա՞նչ թ, սե ըլլալը հասկնալու համար պէտք էր տասը տարի առաջ զայն տեսած ըլլալ և որ երեւոյթն ունի ըսելու.

Է՛ն, մնա՛ք քարոյ, Աստուած եւ արեւ. . .

Ոտքի ամաններ, որոնք իբր հնութիւն անուրանալի արժանիք մը ունին, և որոնց մէջ

ոտքերը. . . կը վախեն. գլուխը՝ ծախու առնուած օրէն ի վեր «կաղապարատիպ» երես չը տեսած ֆէս մը, որուն եզերքը բարակ սե իւղ մը կուրուագծուի՝ տարտամ. . . (կը տեսնա՞ք, իւզոտ ֆէսին անգամ բանաստեղծութիւնը կըլլայ). գլուխը կախ կը քայլէ, (ո՞վ գիտէ, անշուշտ իր չգանձուած ամսականներուն վրայ մը տածելով), այնչափ մտադրաւ վիճակի մը մէջ որ ամէն վայրկեան կառքի կամ ձիու տակ մնալու վտանքէն հրաշքով կը խուսափի. — Աստուած կը սիրէ զայն. . .

Զի վարժապետ է դա:

Անիկա արուեստն արուեստին համար չընել, այլ արուեստը՝ գրամի համար, ինչ որ չարգիւծը սակայն որ տարուան վեց ամիսը բերնին թուրը չցամքեցնէ աղգասիրաբար, կամ ինչպէս որ կըսեն, վասն փառացն Աստուծոյ:

* * *

Հապա վարժուհիները. . .

Առաուն կանուխ ամենքն ալ փողոց կը թափին: Օ՛հ, բախտին խեղճ զրկեալները: Մինչ անդին, իրենց հասակակիցները փափուկ անկողիններու մէջ մեղկօրէն փուռած՝ կը յօրանչեն ծաւրօրէն իրենց անցեալ, ներկայ կամ ապագայ նշանածներուն վրայ խորհելով, և կամ սիրուն, սակեղենիկ երազներ կը տեսնան, որոնց մէջ իրենց ամենէն դերմարդկային բաղձանքին, ամուսնութեան, հասած են. անդին, Հայ դեռատի վարժուհիներ, որոնք դեռ երէկ ելած են դպրոցին գրասեղաններէն, խօսուրդաւոր, խնդալու և ցատկելու ամենէն վառվառն տարիքնուն մէջ, խոժոռ կեղծ դիմակ մը երեսնին անցուցած կօշիկներ կը մաշեցնեն. . . ի դատարարականութիւն ապագայ Հայ իգական սերնդեան:

Շատ պարզ հաղուած են, պարզութիւն մը որ երբեմն մինչեւ թափթփածութեան սահմանագլուխը կը հասնի. եթէ հիմա ձեզ քիչ մը յուզելու տրամադրութիւն ունենայի, կընայի հոս աւելցնել նաև տոգոյն դէմքով, մարմնուն աչքերով և հիւժեալ դիմագիծերով. . .

Մէկ ձեռուրնին մէկ քանի վարդ ու մեխակ, իսկ միւս ձեռուրնին հինգ փեց հատ դասագիրք. «Ի մէջ այլոց» Պօակօպէի ամենէն թոյն — գաշոյնական ու արհաւիրտ մէկ վէպն և Զուլայի չեմ գիտեր որ գործը, առջինը՝ կարգալու համար, իսկ երկրորդը՝ ի տես աշխարհի: Խոյն դրաբար կը խօսին. օտար քառ չմտցնելու համար ամէն ճիղ կը թափեն. ասոնք հակոտնեաններն են Հայ կաթոլիկ օրիորդներուն, որք կը խօսին հինգ-վեց լեզու ըրարու խառնելով: Հայ վարժուհիներն երբ երիտասարդի մը հետ

տեսնուելու առիթն ունենան, ալ կը ճգնին իրենց բոլոր արուեստը թափել հատիկ հատիկ ուր երու և ու երու վրայ մասնաւոր կերպով շեշտելով կը ճռուողեն:

—Ասկեղինիկ մասենագործքեան ջերմ հիացող մ'եմ. վաղուան գրականութեան (որովհետեւ պէտք է գիտնալ թէ աս պահուս վաղուան գրականութեամբ չլքաւ չկայ) կողմնակից եմ, բայց ես սա անխախտ համոզումն ունիմ թէ պէտք է որ գրաբարը իր արդի մեղեայ վիճակէն վերականգնեցնել. . . . Նորապէս բառին ստուգաբանութիւնը շատ ճիշտ է. . . .

Կը տեսնէ՞ք, մեր վարժուհիները գրական ամենավերջին հարցերով կը հետաքրքրուին. մէյ մ'ալ կըսեն թէ մեր աղգը ազատ է: Նորապէս բառին մօրը, հօրը, աղգականներուն և կնքահայրին վրայ ժամերով կը վիճաբանին այն օրէն ի վեր. ուր համեստուհի. . . . Լորտախոյն աղքատները յարոյց, և հոս զարմանալու բան չկայ, քանի որ Բ. դարու Հայ գրականութեան ամենէն գլխաւոր գործը պիտի ըլլայ նոյն բառին. . . . հայրն որոշել:

Երբեմն, սակայն, մեր վարժուհիները մաքուր հայերէն խօսելու մենամուլութեանը մէջ այնչափ առաջ կերթան, որ փոխանակ աղգին երեքուկէս քառորդին հետ մէկտեղ ըսելու.

—Այսօր «տէօնէր քէպապի» կերայ. կըսեն:

—Այսօր դարձախոտովալիս ճաշակեցի:

Կ. Պոլիս

Ե. Թ.

ՔԱՅԱՆԱՆ

(ԱՆՄԵՂ ԿԱՏԱԿ)

Ռստմոյ ի քնե՛ սնանկը.

Խիղճով ետէն սնանկը.

Սին է գանկը, եւ հին՝ գրպանկը.

Իր բարոյականի «Խարթան».

Հոգի.—Սիրոյ նահանգը.

Սիրս.—Մեղին սահանգը.

Դիտե՛, օրհնակի համար

Թէ քանի՞ արշըն է սքեւին երկանկը.

Ու քանի՞ սանդիլ է . . .

Իրիկիկին շայնկը.

Չասկի Մեղունդի միտքը կիյնայ

«Պարսփերնիս սանկ»ը.

Ու կոր մեծիտը կը խորհի

Նշխարֆոյ կնքած ասեմ. . . պասանկը.

Իրեն համար կա՞յ առեղի անոյշ ճայն մը՝
Քան դրամին արձագանկը.

Ու «քեմերը կապել» են ետէն է որ.

Կը սիրէ անցունել արձակ կեանքը.

Ինէ ինէ աղէկ կը ճանչնայ

Ուսելիքին, հազնելիքին քանկը.

Աժան կը գնէ ապրանքը.

Բայց եթէ խաբուի՝

Չի խնայեր խօսքերուն ՏԱՆԿԸ:

Օրուաի մէջ երկու մեղել.

Ժամկոյնի կրտս.— «քաշէ քանկը»

Եւ, դիտե՛, «մեղունդին կեօրէ»

Կը կշռէ երգածին վանկը.

Վրան փնտռէ սուսերուն հանկը.

Սրտը՝ քախած լուսանկը.

Նրոն՝ ջարդած գովանկը.

Մանաւանդ ջղին կը դպի՝ թէ որ

Աղբաս մը բնակի սանկ ֆոյսանկը:

Լաւ սերսած է երիկ—կնկան

Կազելու հանգարանկը.

Երբ տեսնայ խեղրոյն մոթ մէկ երանգը՝

«Ընե՛մ մի, չընե՛մ մի» զինկը կառնէ
վարանկը:

Բայց դուն փարա՛ քսէ անոր.

Ոտքը կառնէ խրդմտանկը.

Եւ աչքը վսանկը.

Երբոր սակէն եղայ փորձանկը՝

Ու յոտի իր յանցանկը.

Էն առաջ յոյսար անտեղուանկը.

Ետէն կը ցցուի աչքին Վանկը.

Հապա փիղուն՝ գրկանկը. . . .

Կամ անանկը կամ ասանկը.

Ամեն օր նայի ծոցին ցանկը.

Պաշտօնակցին ծուխը ձգել ճանկը.

Ա՛ս է իտեալ իր ջանկը.

—Աստուծո՛յ ժանգը

Կ. Պոլիս

ԹԷՈՂԻԿ

ԾԻԾԱՂ

Կինը. — Ինչպէս, իրա՞ն է որ այրեցիր այն
նամակը որ նշանուած ժամանակս քեզ դրած էի.

Էրեկը. — Այո՛, սիրտնիկս, վասն զի մեռնելէս
վերջ եթէ գտնուէր, այնպէս պիտի կարծէին որ
երիտասարդութեանս ժամանակ խենդ մ'ըն եմ
եղեր.

—Տիկին, իմացայ որ բժիշկնիդ փոխեր էք, ի՞նչ է պատճառը:

—Օհ, մի հարցնէք, բարեկամ, անցեալ շաբթու իմացայ որ, առջի բժիշկս աղքատ աղջկան մը հետ նշանուեր է. ասանկ տիմար մարդու մը ի՞նչպէս վստահիմ կեանքս:

Յաճախորդը. —Բայց չեմ հասկնար թէ ինչո՞ւ համար կարմիր գինին ճերմակէն աւելի սուղ կը ծախես:

Գինեպանը. —Որովհետեւ կարմիր ներկին համար ալ ստակ կուտամ:

—Վերջապէս, սիրուհիս, 15 օրէն պիտի ամուսնանանք:

—Ուրեմն այս երկու շաբթուան մէջ մէկը զմէկ շատ սիրենք. վերջը ո՞վ գիտէ ինչ կըլլայ ինչ չըլլար:

ՏԵՐԱԳԻՐ

Աժանս Բոժոժիկ եւ Ընկ.

Թոնքին

Վարժարանիս տարեկան հարցաքննութիւնը յաջողապէս անցան. ուսանողաց յառաջդիմութենէն շատ գոհ մնացին ներկայ. . . չգտնուող քննիչք:

Մանչերու կողմէ պատրաստուած բարդագիտութեան քարտէսները ի տես դրուած էին. . . ճեմիչի պատերուն վրայ:

Քամչաթքա

Պաշտօնէ գաղթեցուցուած յօկոյ խմբագիր մը ձեռքի մէջ նայելով մարգարէութիւններ ընել սկսելուն համար Քսէնիոսքեան տիտղոսն ու մըրցանակը առաւ:

Քամչը պօլու

Դպրոցին մօտ գտնուող նախարարական Միւրիկի կողմէ պատրաստուած սթաթիսթիքին նայելով, այս տարի նախորդ տարիներէ աւելի. . . ֆիւլիւրպագներ արտադրած է մեր վարժարանը:

Քալէա սիփինօր

Անցեալ շաբթ իրիկուն մէր տէր պապան գինետան մէջ մոռցեր էր. . . խալբախը:

ՈՒՅՏՈՒՐՄԱՍԻՕՆ

Լ Ի Ս Թ Ա

Եէնի քիւշառ օլունաճագ «Վագթի հալ լօգանթասը»-ն աթիտէքի եէմէք լիսթասը՝ տէրճի զըմնընտա թարաֆըմըզա կէօնտէրիմիշ տիր:

Բօթաթ պօրճ.

Զօրպա սաֆսաֆի.

Դայնանա հաշլամասը.

Կէլին գալուրմասը.

Կիւլէյի սըղտըրմասը.

Սալցալը խնամի քէօֆթէսի.

Դայնաթա քէպապը.

Պիր տալտա տուրմազ տէօնէր քէպապ.

Եիւրէք էզմէսի էթ իլէ.

Դլալուչ եալանճը տօլմասը.

Գըսըբըր մուսագկասը.

Մանթարը բաբալ եահնիսի.

Եէյէն տօյմալ բիյազը.

Բամբասանքճը գըղարթմասը.

Կըլկըր թալմասը.

Ձէվզէկէրին խիւլասասը, սիւտիւ.

Հաւկիթլէրին զըրվասը.

Գարը գօճա տըրտըրը պիւֆթէյի.

Պօշ կէզէնլէրին լաֆ տօլմասը.

Ազգային ֆիլէթօնըն սկառասը.

Մայօնէզի սուլու շիքլէրին հաշլամասը.

Խաչագողար թուրչուսու.

Բուտրալը թալա.

Քառնապիթ քօմբօստօսու.

Բանճար շէրպէթի.

Գըրմըզը եիւզիւ կաթնապուր:

ԱՇՃԸ ՄԱՆՕԼ

Հրատարակուեցաւ «Այլնէի Լէթայիֆ»-ի 14երորդ տետրակն ալ: 20 տետրին բաժնեգինն է Պուլկարիոյ համար 2 ֆր. արտասահման 2ու կէս ֆր. կանխիկ:

ԹԵՐԹՈՆ «ՀԱՅԵԼԻ» (22)

ՌԷՆԷ ՏՐԻՍՏԵ

ՄԱՐԳԱՐԻՏՆԵՐՈՒ ԳԵՏԸ

(ՊԱՐԹԻՐ-ՄԱՄԱՌՆԵ)

Բերքինս, վասն զի ինքն էր որ կրնկերանար մեծարոյ գատաւորին, շարժուով մը յայտնեց թէ այդ վերաբարանափոխում շատ զժուար եղած չէր, և իր բարեկամին հետեւեցաւ, որ իր անունը միայն տալը բաւական եղած էր որպէս զի խորհրդաւոր խրճիթին գունը բոլորովին բացուի:

Տանտէրը իր այցելուները մտցուց ողորմելի երէւոյթով փոքր սրահ մը: Թանձր մթնոլորտը տոգորուած էր թափանցանց հոտով մը, որմէ յայտնի կըլլար թէ այդ տեղը բնակողը ինչով կը զբաղէր:

Սրահին ամբողջ կահ կարասին էր սև փայտէ մեծ սուփ մը, հին ճաղ մը որուն մէջ գեռ կը մխար ափիոնի ծխափայտ մը:

Վտանգաւոր թմրեցուցիչին գործածութեանը արգելքին դէմ եղած ըմբոստութեան այդ ապացոյցը տեսնելով, մանտարէնն իսկոյն յիշեց իր բարձր պաշտօնը և մատովը ցուցնելով ծխափայտը, անշուշտ խտորէն պիտի յանդիմանէր ծխողը, երբ մաքսախոյսը կեցուց զայն ըսելով անգլիերէն.

— Զեմ յուսար որ տեղեկագիր մը պատրաստէր այս խեղճ արարածին դէմ:

— Ինչո՞ւ չէ:

— Բայց պարզապէս անոր համար որ թերեւս ես ծախած եմ զայն եւ դուք թոյլ տուած էք որ ներս մտնայ:

— Շիտակ է, ըսաւ Պօքթա-Թօկրիսի մաքսային նախկին նախորդ պետը, ահամայ ժպիտով մը: Մնաց որ ընելիքներս տարբեր բան է:

Այն ատեն, Ռուսիին դառնալով որ, մինչեւ գետին ծռած, խոնարհաբար կը սպասէր որ բարեհաճին խօսք ուղղել իրեն, հարցուց.

— Դո՞ւն ես որ վաղը չէ միւս օր Հոնկ-Քոնկի մէջ պիտի կախես այն ծովահէններն որք անցեալ շաբթուա հաւան դատապարտուեցան:

— Այո, Տէր, պատասխանեց մարդը, գլուխը վեր առնելով:

Եթէ խեղճ Սոլ-Պրոտէն հոն եղած ըլլար, նորէն պիտի դողար, ճանչնալով այդ անձը: Այն դահիճն էր

որ բանտ տարած էր զայն և այնքան անգթօրէն չարաշարած՝ խոստովանեցնելու համար ոճիր մը զոր չէր գործած աղջիկը:

— Պիտի գլխատի՞ս թէ պիտի կախես այդ մարդիկը: Փոխարքային կը սպասուէր հրամաններն առնելու համար:

— Այսօր ստացայ այդ հրամանները: Օրէնքը գիտէր որ միայն կառավարական ըմբոստները թոյլ կուտայ գլխատել: Այդ ծովահէնները միայն Անգլիացիներուն վրայ յարձակիր և զանոնք կողոպտեր են. պիտի կախուին:

— Միայն Անգլիացիներ: Ահա խտրութիւն մը որ պատուաբեր չէ անգլիական գրօշին համար, մրմռաց Բերքինս, բայց այս անգամ պարզապէս կը սքանչանամ այս բանին վրայ:

Դահիճը ճշմարտութիւնը կըսէր:

Գլխատումն այն ատեն Չինաստանի մէջ բացառիկ պատիժ մըն էր, վասն զի եթէ Երկնայիններն ամենախորին արհամարհանք կը տածեն մարդկային կեանքին նկատմամբ, կուզեն գոնէ առանց յօշոտուելու մեռնիլ: Այս պատճառաւ իսկ իրենց գլխուն դադաթը խնամով կը պահեն մազերու պոչ մը որով մահուան հրեշտակը պիտի վերցունէ զանոնք. կը սոսկան այն պատժէն որ երկուքի պիտի բաժնէր զիրենք և մասամբ երկրի վրայ պիտի ձգէր:

— Այդ մարդիկը կը ճանչնա՞ք, շարայարեց Մէնկ, որ իր բարեկամին խօսքին վրայ չէր կեցած:

— Այո, պատասխանեց Ռուսի, որ այս բոլոր հարցումներէն կը սկսէր յոյժ խռովիլ:

— Անոնցմէ մէկը Բէյ-Զօ կը կոչուի, խուճբին պէտն էր:

— Ճիշդ ան է: Ա՛հ, անտանելի սրիկայ մը: Կարելի չեղաւ խօսեցունել զայն:

Դահիճը ցաւով կը յիշէր թէ մէկ ժամէն աւելի տանջած էր ծովահէնը՝ առանց յաջողելու խոստովանութիւն մը խլել բերնէն:

— Հիմակ ո՞ւր են դատապարտեալները:

— Միշտ ի Հոնկ-Քոնկ, կառավարիչը պահանջեց որ մինչեւ մահուան օրը հոն մնայ: Անգլիացի զինուորներու խուճք մը հոն պիտի տանի զանոնք:

— Շատ աղէկ, ես Բէյ-Զօ դատապարտեալին մարմինը կը գնեմ:

— Բէյ-Զօի մարմինը, կրկեց դահիճը չափազանց զարմացած:

— Այո, Բէյ-Զօի մարմինը, իր դիակը վերջապէս: Քեզի ի՞նչ վնաս ունի, կախելէ՞ք ետքը պիտի յանձնես ինծի:

Ռուսի կը շարունակէր գիտել իր խօսակիցն աւանց անոր միտքն հասկնալու :

Մէնկ, անհամբեր, յարեց .

— Ըսէ նայինք : Ո՞րչափ կուզես : Ա՛ռ, բաւական է սա : Եթէ շատ քիչ է, գինը դուն ըսէ :

Այս խօսքն ընելով անկողինն վրայ նետած էր ծանր բռնակ մը որ մերսիկեան զրամով— չինացիներուն աւանդէն աւելի յարգած գրամը— ախրան կը պարունակէր որքան թշուառականը չպիտի կարենար շահիլ մէկ տարուան մէջ :

Սոկրատէս կը վարանէր և չէր պատասխանէր :

— Որոշուեցա՞ւ, հարցուց մանտարէնը բարկու-թեամբ :

— Պէտք է ըսել ինծի թէ ի՞նչ նպատակով այս սա-կարկուծիւնը կընէք ինծի հետ :

— Քու գիտնալիք բանդ չէ : Ի՞նչպէս կը յանգ-նիս ինծի հարցափորձել :

— Բայց դուք ինչ աղէկ գիտէք, տէր, թէ օրէնքը հարկեր Պաւլուի հարուածով կը պատժէ այն մարդը որ մեռելի մը մարմինն յանձնած է :

— Ա՛հ, վերաբուժի հայթայթի՞չ կը կործնես զիս, պատասխանեց արժանաւոր պատաւորը ուժգնութեամբ, « Պաւլուի հարկեր հարուածդ բաւերը արթնցուցած ըլլալով իր մէջ ամենատխուր յիշատակներ, խնդիրը տանկ չէ : Ընդունէ կամ մերժէ : Եթէ ընդունիս, Բէյ — չօի մարմինն յանձնելէ՛ք յետոյ այս գումարին կրկ-նապատիկը պիտի ընդունիս : Եթէ մերժես, վաղը պիտի յիշեմ որ ափսոս խմած ատենդ բռնեցի քեզ :

— Լաւ, կընդունիմ, փութաց պատասխանել վատթար սրիկան, զարհուրած :

— Ուրիշ մտիկ չըէ զիս որպէս զի չը մոռնաս յանձնարարութիւններս : Նախ դուն անձամբ պիտի կախես Բէյ—չօն, բայց ամենէն վերջը, շատ մեղմիւ, առանց շարքիկելու, և երբ կախես, հանդարտօրէն պիտի թողո՞ս զայն շուանին ծայրը :

— Լա՛ւ :

— Կէս ժամ ետքը, ըստ սովորութեան պիտի գաս վար իջեցունել գիտնելու : Գիշեր պիտի ըլլայ, հետեւապէս մինակ պիտի մնաս մարդոց հետ : Մարմինները պիտի գնես սալակին վրայ հանրային փող տանելու համար : Բայց Բէյ—չօն մարմինը պիտի մոռնաս կախաղանին տակ : Ասկից աւելի բան չեմ պահանջեր քեռէ :

— Կէտ առ կէտ պիտի գործադրուի, կը խոստանամ :

— Այն իրիկունն իսկ ստակը պիտի առնես :

Այլանկատար զաշտօնեան մինչեւ գետին խռարհեցաւ իր երախտագիտութիւնն յայտնելու համար, և

առնելով իր սենեակը լուսաւորող ծխարձակ լամպարը, պատրաստուեցաւ ծածու գնել իր հիւրերը :

— Բան մը չմոռնայ, անանկ չէ՞, հարցուց Մէնկ Բերքինսի, որ մունջ վկան եղած էր այս տեսարանին :

— Ո՛հ, ըսաւ նաւապետը . շահն ու երկիւղը պատասխանատու են միւլ այս մարդուն համար : Շուտով մեկնիք, եթէ ոչ չեմ կրնար գործակալատուն գտնալ . դուները գոցուած կըլլան :

Նախապահին առջեւ ինկաւ և նախ ինք անցաւ տան սեմէն, որուն դուռն անմիջապէս գոցուեցաւ և տնեւուն :

Ռուսի անշուշտ անհամբեր էր համրելու Բէյ—չօի գիտնելու համար ընդունած ստակը, և նորէն ծխելու համար նաև ափսոսը զոր մէկէնիմէկ թողած էր :

Տասը վայրկեան ետքը, Բերքինս և Մէնկ կամուրջ հասան, ուր գոհունակութեան վերջին հառաչ մը արձակելէ յետոյ, մանտարէնը կեցուց իր բարեկամն ու ըսաւ .

— Ամեն ուղածնիդ ըրի, թէ եւ բան մը չեմ հասկնար ձեր նպատակէն : Կը յուսամ որ հիմակ ալ դուք ձեր խոստումը պիտի բռնէք :

— Իմ խոստումս, ո՞րը, հարցուց անզլիացին զարմացկոտ երեւոյթով մը և բարեկամը մեղմիւ քաշելով զէպ ի քաղաք :

— Ի՞նչպէս որը, բացառանչեց դժբախտ գատաւորը ծիծաղաշարժ յուսահատութեամբ մը, բայց ինծի սգնելու է որ գտնեմ Ենկի ճշմարիտ սպանիչը, բանի որ կերեայ թէ Ի—թէն չէ : Իսկ դուր կը փնտռեմ, կը խոստովանիմ որ բան մը չեմ գտներ :

— Ա՛հ, իրաւ է, ներեցէք, քիչ մը մոռցած էի ձեզ : Ըսէք տեսեմ, գործը ո՞րտեղուանքն է :

(Շարունակելի)

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱՆԱԿՈՒԹԻՒՆ

ՀԱՅՐԵՆԻԻԻ ԶՈՀԵՐ

(Պատկեր մը տաճկահայաստանի իրական կեանքէն)

Գրեց

Ղաղարու Պ. Նախապետեան

Գին 1 ֆր. 50 սանդիմ

Կը ծախուի «Իրաւունք»-ի խմբագրատունը և Ա. Զարպհանէլեան գրատունը :

Печатница „Взаимность“ — Варна.